Վերջին շաբաթներս «Մշակը» կրկնապատկել է իր եռանդը։ Էլ հայհոյանք չմնաց, որ չթափեց հոգևորականության գլխին. զրպարտեց, իւր սեպհական յանցանքները հոգևորականության շլնքին փաթաթեց, նրան վերագրեց այնպիսի ձգտումներ, որոնք միշտ զզուելի են եղել մեր հոգևորականությանը, և ի վերջոյ աւելացրեց հետեւեալ նշանաւոր բառերը.

«Այդ ձգտումը դեմ է և պիտութիւնն օրէնքների սրուն...(1895 թ, № 77) եւ այդ թերթը, o sancta simplicitos, Թուխմանչևի, Կիլիկեցի վատ եկեղեցականների դեմ խօսելու քաջութիւն ունի։

Եղել են և կան վատ հոգևորականներ, ինչպէս և վատ աշխարհականներ. և նրանց, մը նոյն իսկ քաղաքակիրթ ազգերի մէջ չկան վատ մարդիկ։ Բայց «Մշակ»-ը վատերի վրայ չի յարձակւում, այլ ամբողջ հոգևորականութեան, որպէս զի իւր դաշնակիցների հետ զուգահեռաբար դնացած լինի։ Բայց, ո՜հ զարմանք, այդ խարդախ գործողութիւնը «Մշակ»-ը կարողանում է ծածկել «Ժողովրդի իրաւունքների» քողի տակ։

«Արարատ»ի 7-րդ համարում զետեղուած է գերապատիւ Կարապետ վարդապետի մի յօդուածը՝ իրը պատասխան «Մշակի» յարձակմանց, որից առաջ ենք բերում հետեւեալ հատուածները.

«Դուք խօսում էք ինչ որ իրաւունքների մասին. այո, կան այդպիսի իրաւունքներ, որոնց տէրը ոչ ժողովուրդն է և ոչ հոգևորականը, որոնց պահպանութիւնն ու վերահսկողութիւնը սակայն հոգևորական դասի ձեռքն է սըրուած, և վայ այն հոգևորականին, որ իրեն յանձնած աւանդը սրբութեամբ չէ պահում, պատրաստ չէ իւր անձը դնել այդ իրաւունքների պաշտպանութեան համար։ —Դուք քաջ էք, գիտե՞նք. ձեր տարած յաղթութեանց ապացոյցները ամենայն օր պարզ աչքով տեսնում ենք, և եթէ շարունակէք միշտ այդ ճանապարհով գնալ, մվ գիտէ, գուցէ կը յաջողուի մի օր այդ իրաւունքները հանել իսկ հոգևորականների ձեռքից. . . ժողովրդի անունով... բայց ում համար... ժողովրդի՞... մթթէ այդրան միամիտ էք։ Այո, քա՞ջ էք դուք, և մենք տարակոյս անգամ չունինք, որ այն օրն իսկ, երբ այդպիսի իրաւունքները կորած կը լինին, անցած այնպիսի մի տեղ, որտեղից ձեր բարձրագոչ ապացոյցներով ոչինչ այլ ևս ետ բերել չէք կարող, չէք էլ փորձի՞ դուք երես կունենաք դեռ պարծենալու կատարած քաջագործութիւններով, մեզը ուրիշների վերայ կը ձգէք։ Չէ՞ որ դուք արդէն ընդունակ էք այնպիսի հրէշային նախադատութիւններ գործածելու, ինչպէս՝ «Էջմիածինը համարեա միշտ գրանուել է մեր հակառակորդների ձեռքում»... Ուրեմն Ս. Էջմիածինը կարող է սորա ու նորա ձեռքում լինել... ուրեմն դուք յոյս ունիք, որ նա մի օր էլ ձեր ձեռքում կը լինի... խաղալի՞կ..., գործի՞ք ուրիշ նպատակների համար։ Գուցէ, մվ գիտէ. չարամիտ է բաղդն ու փոփոխական... բայց եթէ կը գայ մի այդպիսի օր՝ լաւ իմացած եղէք, որ Ս. Էջմիածնում կը գտնուին մարդիկ, որոնց գլուկի վրայից անցնելը յաղթական ոտ կոխելով գնալու չի լինի ձեզ։

Զարմանալի ժամանակների մէջ ենք ապրում, ճշմարիտ։ Ժողովրդի դէմն է, ժողովրդի թշնամին մի հոգևորականութիւն, որի հրամանատարը Հայոց Հայրիկն է, և ժողովրդի կողմը, նորա իրաւունքների պաշտպան այնպիսի մարդիկ, որոնք իրենց սենեակներում նստած հրմատարդ գործակալների միջոցով միայն շփումն ունին ժողովրդի հետ։

Մենք ժողովրդի հետ... բարի՞, չա՞ բարի, եղէ՞ք դուք ժողովրդի հետ. մենք արդէն իրականութեան մէջ, կենդանի օրինակներով կապացուցանենք, թէ մենք ում հետ ենք։ Ցաղթական երգերով կը ուսի ասպարէզ էք հրաւիրում մեզ, վրատեղ նախօրօք յաղթութեան վերայ։ Խոստովանում ենք, որ այդ կործանիչ նեղքին կաւիւ ոչինչ զուարճութիւն մեզ չէ պատճառում, որ մենք պարծենալու ոչինչ չենք գտնում, երբ արիւն արցունքի մէջ թողած խե՞ղճ ժողովրդի՞ նորա անունով իրար միս բզկտելու պիտի ելնենք։ Մենք լաւ ենք տեսնում այն անդունդը, որ լայն բերանով բացուած է հայի առաջ, և սոսկումով ենք դիտում, թէ ինչպէս այնտեղ գահավէժ գիմում են օրհասական եռանդով հարազատ, արիւնակից եղբայրներ՝ ոտքառնալով ամենքիս միասեղ քաշ տալ, և մենք կը փորձենք կանգնեցնել այդ կորստաբեր հոսանքը։

Այո, մենք ընդունում ենք ձեր հաւէրը. ինչ տրած, երբ կուզէ պէտք է, օրբազան իրաւունքների համար կռուել, և հաւատացած եղէք, որ ոչ մի քայլ չենք ընկրկի։ Ժայռեր չենք մենք, բայց ժայռի վերայ ենք կանգնած՝ այնպէս հաստատուն, որ դատարկ քամիներն ու փոթորիկը մեզ վրդովել չեն կարող։ Մեծ մեծ ակնկալութիւններ մենք չունինք. մեզ հոգի տուողը պարարի այն նուիրական զգացումն է, որի ազդեցութեամբ յոյս ունինք, թէ այն օրը, երբ մեր բան ցերը կլցայ և անցած գնացածի համար հաշիւ կը պահանջի՝ խնարհած աչքերով կարող պիտի լինինք ասել. «Ծառայք անպիտանք էաք, զոր պարտ էաք առնել՝ արարաք»։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Ամերիկայում հրատարակվում է մօտ 20 հազար լրագիր, որոնցից 2 հազարը լոյս է տեսնում ամեն օր. այդ լրագրների արժողութիւնը խմբագրատան կայքի հետ միասին կարելի է գնահատել 408 միլիոն ռուբլի։

Լրագրների ընդհանուր եկամուտը հաւասար է 409 միլ. ռ., հրատարակիչները վճարում են աշխատակիցներին 150 միլ. ռ., Նիւ-Յորկում մի խմբագրապետ կայ, որ ստանում է 90 հազար ռ., և այդ ռոճիկը հաւասար է Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահի ռոճկին։ Խմբագրներից շատերը ստանում են 20 հազարից մինչև 23 հազար ռոճիկ, այն է մի փոքր աւելի քան թէ ըստանում են նախարարները. իսկ ընդհանրապէս խմբագրները ստանում են 9 հազարից մինչև 15 հազար ռ.։

Առաջնորդող յօդուածներ գրող աշխատակիցներն ստանում են 9 հազար ռ. կրիտիկոսները և ներքին տեսութիւն կազմողները ստանում են 5 հազարից մինչև 7 հազար ռ., լրատուները 1,500-ից մինչև 6 հազար ռ., նայելով թէ ինչ տեսակ անցքեր են նկարագրում։ Բոստոնում խմբագրների պաշտօն կատարողները և առաջնորդող գրողները 2 հազարից մինչև 5 հազար ռ., երաժշտութեան և գեղարուեստի վերաբերեալ յօդուածներ կազմողները ստանում են 2 հազարից մինչև 4 հազար ռ., տարեկան։ Վաշինգտոնում Փիլադելֆիայում և Բալտիմորում լրագրների աշխատակիցների գլաւոր աշխատանքը գնահատվում է նոյն քանակութեամբ, իսկ Չիկագոյում նոցա վարձատրութիւնը աւելի ևս մեծ է։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

XII

14/26 Յուլիսի 1895.

Երկիւղ չէ անցեալ օրը սուլթանի «իրատէով» ներումն յայտարարուեց բոլոր հայ քաղաքական յանցաւորներին, բացի նրանցից, որոնք մեղադրվում են մարդասպանութեան մէջ։ Երկու օրուան ընթացքում Կ. Պոլսոյ բանտերից ազատուած են մինչև 600 հայեր, որոնց մեծ մասը նոր չնչին պատճառներով բանտարկուած էին. բայց շատ է և այնպիսիների թիւը, որոնք տարիներով տանջուել են բանտերում։ Բանտարկեալներին ազատելուց առաջ նրանցից պահանջում են հաւատարմութիւն երդումն տալ սուլթանին։ Առաջին օրը շատերը չէին հաւատում այդ լուրին և դա մի նոր խաղ էին համարում տանջող կառավարութեան կողմից. բայց այսօր Պոլսոյ փողոցներում ազատ երևում են այնպիսի բանտարկեալ հայեր, որոնց լոյս աշխարհ դուրս գալուն ոչ ոք յոյս չունէր այստեղ։ Ի մէջի այլոց բանտից արձակուած են նաև այն 14 հայերը, որոնք ձերբակալուցին պարսկա-տաճկական սահմանագլխում, երբ ուղեկցում էին անգլիական լրագրի մի թղթակցին։

Նրանք ամբաստանուել էին իբրև հրազակային խմբի անդամներ և մեծ հանցութեան տակ էին բանտում, բայց այժմ ազատ են։ Բացի դրանից հեռագրով հրամայուած է բոլոր գաւառների կուսակալներին անմիջապէս արձակել հայ բանտարկեալներին։ Այս օրերս այստեղ սպասվում են շատ հայ աքսորեալներ Աքիայից (Արաբիա), Ի թիւս նոցա և «Արձագանքի» աշխատակիցներից մինը, որ զոհ էր գնացել տիրայիշատակ Թիւթիւնջիի մատնութեան։ Երևի այդ լրագրական անշահասէր գործչի երեսին՝ Աքիայից գալուց յետոյ մենք պարզերես կը նայենք, որովհետև նրա վերջին նամակների մէջ ապեխաբէ բողոք էր լսվում ծանօթների և բարեկամների դէմ. հայ աքսորեալը իր ծանօթներից մինչև անգամ ցամաք հացի փող չէ ստացել. օ՜, երևի նա շատ բաներ կունենայ մեզ պատմելու. . .

Բայց կը հարցնէք անշուշտ թէ ինչպէս եղաւ որ տաճիկ կառավարութիւնը համաձայնեց «ընդհանուր ներումն» յայտարարել։ Նախ՝ որ այդ ընդհանուր ներումն չէ de facto, որովհետև հարիւրաւոր բանտարկեալներ դեռ մնում են բանտերում և նոյն ձերբակալութիւնները շարունակվում են, երկրորդ՝ տաճիկ կառավարութիւնն այդ քայլն արաւ անգլիական նախարարապետ Սալսբիւրիի ուժեղ ճնշումից հարկադրուած։ Անցեալ շաբաթ սուլթանը հեռագրում է Լօնդոնի տաճիկ դեսպան Ռուստէմ փաշային՝ շնորհաւորել «Տաճկաստանի բարեկամ» Սալսբիւրիի նախարարութիւնը և հարցնել նրա կարծիքը հայկական խնդրի մասին։ Նախարարապետը պատասխանում է Ռուստէմ փաշային թէ ցանկանում է որ սուլթանն անյապաղ ստորագրէ ռէֆօրմների ծրագիրը, որ ներկայացրել են երեք պետութեանց դեսպանները։ Ռուստէմ փաշան փոխանակ այդ պատասխանը հաղորդելու սուլթանին, ընդհակառակն հաղորդում է նրան Սալսբիւրիի «յարգանաց սղջոյնները». սակայն Կ. Պոլսոյ անգլիական դեսպանը նայնպէս ստացած լինելով Սալսբիւրիի հեռագիրը, նրա բովանդակութիւնը յայտնում է Բ. Դրան։

Վերջինս չէ հաւատում, ուստի երբ կրկին հարցնում են Ռուստէմ փաշային, նա պատասխանում է թէ ճիշտ է, միայն ինքը չհամարձակեց այդպիսի մի տեղեկութիւն երբ ունի Պոլսոյ մի տեղ, որպէս զի նրա առաջնորդութեանը չմնասէ... Անգլիական նախարարապետի հեռագիրը կարական է, նա պահանջում է անմիջապէս ստորագրել ռէֆօրմների ծրագիրը, առանց յետաձգելու և պատճառաբանելու։ Թող իմանայ տաճիկ կառավարութիւնը, ասուած է հեռագրի մէջ—որ եթէ նա չընդունի ռէֆօրմների ծրագիրը և այսօր կամ վաղը մի այլ պետութիւն տիրելու լինի ամբողջ Տաճկաստանին՝ վերջինս ոչ մի օգնութիւն չէ կարող սպասել Անգլիայից։ Ահա այդ հեռագիրն է, որ սոսկումն է պատճառել Բ. Դրան. բայց դրանք կրկին չեն ուզում միանգամից հանդստանալ, այլ կրկին շարունակում են խաղ խաղալ՝ փոխանակ միանգամայն ծրագիրն ստորագրելու, ուզում են ցոյց տալ, որ արդէն սկսում են իրագործել այդ ծրագիրը և սկսել են բանտարկեալներին վերաբերեալ կէտից, որ ամենաթեթեն է և ամենաառանգականը ծրագրի մէջ։

Այդ մտադրութիւնը երևի Բ. Դուռն առաջուց էլ ունեցել է, որովհետև «ընդհանուր ներումն» յայտարարելուց մի քանի օր առաջ բանտարկուեցին մայրաքաղաքում 400—600 անձինք, որպէս զի «ներումից» յետոյ արձակուածների թիւը շատ երևայ։ Այս բոլոր խորամանկութիւններն արդէն հասկացուած են և նրանք չկարողացան մի մազաչափ անգամ թուլացնել անգլիական պետութեան ներկայացուցչի պահանջի ոյժը, որ սպառնալից կերպարանք է ստացել արդէն։

Երկիւղ լուր տարածուեց քաղաքում երբ թէ սուլթանն արդէն ստորագրել է ռէֆօրմների ծրագիրը և շատերն այդ մասին հեռագիրներ յանձնեցին, որոնք ի հարկէ տեղ չեն հասել, որովհետև այդպիսի հեռագրերն այստեղի հեռագրանից ուղղակի պլատան են ուղարկվում։ Ես չհեռագրեցի միայն հիասթափումն չպատճառելու համար «Արձագանքի» ընթերցողներին և չսխալուեցայ, որովհետև ճիշտ չէ այդ լուրը։

Կիլիկիոյ եպիսկոպոսների հեաքը կարել է. նրանք մնացել են երկու կրակի մէջ. ոչ կարողանում են Կիլիկիա մանել և ոչ Պոլիս վերադառնալ։ Ինչպէս գրել էի, պահանջուած է որ նրանք յետ դարձուին, բայց մինչև այժմ դեռ յայտնի չէ, թէ նրանք որտեղ են պահուած, որովհետև վախենում են երևալուց։ Զէյթունից այստեղ լուր հասաւ թէ այնտեղ մեծ խռովութիւն է եղել և տեղի է ունեցել ընդհարումն ժողովրդի և զօրքի մէջ. տաճկական զօրքը ջարդուել և փախել է։ Ոստիկանական հսկողութիւնը սաստկացրել է, որովհետև կառավարութիւնը երկիւղ ունի Պոլսոյ մէջ ժողովրդական շարժումից. այդ է պատճառը որ գաւառացիներից մի քանի հարիւր հոգի չոգենաւերով ուղարկեցին պանդան կղմեր, իբր թէ հայրենիք վերադարձնելու դիտմամբ։

Տաճկական ոստիկանական նախարարը մի առանձին ուշադրութեամբ սկսել է զբաղուել «Արձագանքի» յատուկ թղթակցի անձով։ Նա պատուել է ռուսաց հիւպատոսարանին, թէ ապերիս զրողը զրգռում և տակը ու վրայ է անում Պոլիսը. «մտնում է—բողոքել է Նոզրմ վաշան—այս խմբագրութիւնից այն խմբագրութիւն, սրպարանոցներ, խանութներ, տներ, սրճարաններ և կառավարութեան հակառակ մտքեր է տարածում, հայն, հայն»։ Այդ մասին իսկ այսօր պաշտօնապէս յայտարարուեց։ Զարմանալին այն է, որ ես տեղական խմբագրութեանց ոչ մէկի հետ յարաբերութիւն չունիմ, որովհետև սրքան որ ուսումնասիրեցի զրանց ամենքն էլ պաշտօնական թերթեր են և այնքան են նման մամուլի օրգաններին, որքան որ էշը նման է սոխակին։ Փորձել Պոլսոյ մամուլի ներկայացուցիչների հետ որ և է գրական գործի մասին խօսել, այդ կընշանակէ միայն ջուր ծեծել և ժամանակ կորցնել, ուստի ես ոտքս հեռու եմ պահել դրանց չէմքերից, թէև շատ անգամ եմ ուզիներ ունեցել տեսնելու և խօսելու «պարի» վրայ առաջնորդողներ գրող լրագրի խմբագրներից մէկի հետ և համոզուել եմ, որ դրանք աւելի տաճիկ են քան ինքը տաճիկը և այդ իմ եզրակացութիւնս չեմ ծածկել իրենցից։ Բայց այստեղի մամուլի ներկայացուցիչների մասին յետոյ։

Իրերի վիճակից երևում է որ հայկական խնդիրը (ռէֆօրմների ծրագրի խնդիրը) գտնվում է վերջին ճգնաժամի մէջ և այսօր կամ վաղը պիտի վճռուի։ Մի տասն օրից յետոյ ինձ կընայ քաղաքական թղթակցութիւններ գրելը թողնել պաշտօնակցիս և հեռանալ Պոլսից ու գրել մանրամասն այն բազմաթիւ և հետաքրքրական տպաւորութիւնները, որ ես կրել եմ այստեղ և որոնց «Արձագանքի» ընթերցողներին հաղորդելու պատիւը կունենամ։

Ս. Հախումեան։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԻԴԻԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԱՆ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1894 ԵՒ 1895 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

—

Զիրաքլու գիւղ (Բզնունեաց գաւառ) 1894 թուականի յուլիս ամսին Տօկօ անունով մի քիւրդ, որ մեր գիւղի մէջ հովութիւն կ'անէր, յանկարծակի մեռաւ. դրա մահուան լուրը կայծակի արագութեամբ տարածուեց շրջակայ Համիդիէ քրդերի մէջ, որոնք Տօկոյի մահուան պատճառը խեղճ Զիրաքլի հայ գիւղացոց համարելով՝ սոնձարձակ անօթի գայլերի պէս գիւղը թափուեցան։ Էմին և Հիւսէին փաշաների 300-ի չափ կատաղած ձիաւորները ամբողջ ութ օր տանի ու վրայ արեցին գիւղը և ամեն ինչ կողոպտելով յետ դարձան։ Անհնարագրելի էր գիւղացոց անտանելի վիճակը. կանանց հեծեծանքը, մանուկների սրտաճմլիկ կականները... ողորմելի Զիրաքլեցին ճարահատեալ՝ թողուց իւր սեպհական տունը, կահ կարասիքը և նոյն տարուայ հունձքը և ընտանեօք Անէն գիւղը գաղթեց։ Այդտեղից մեր գիւղի մի քանի երեւելիները Վան գնացին և ներկայանալով կուսակալութեանը՝ բողոք տուին եղած հարստահարութեանց համար. բողոքը իբրև թէ ընդունուեց։ Նենգամիտ Բահրին զործը յանձնարարեց Թաքուր աղասի Դարվիշ բէկին։ Եկաւ Դարվիշ բէկը. գիւղի կողոպտուած ապրանաց արժէքը հաւասար էր մօտ երկու հազար (2000) լիրայի. դրա փոխարէն իննսուն (90) լիրա պարաք նշանակեց յանցաւոր Համիդիաների վրայ, զոր պէտք է ստանային Զիրաքլի գիւղացիք Ականցի գայմագամի միջոցաւ. իսկ ինքը Վան վերադարձաւ, բոլորովին զոհ իւր արած արդար դատաստանին վրայ...

Ականցի գայմագամը դեռ կը վճարէ իննսուն լիրան...

Կառավարութեան մի սաստիկ հրամանաւ բանտարկեալներից վերադարձրին մեզ մեր նախկին գիւղը՝ ի Զիրաքլի՝ թերի մնացած հարստահարութիւնը լրացնելու համար։

Լսելով Զիրաքլի գիւղացոց վերադարձը՝ Էմին փաշան աւելի կատաղած ոտք կոխեց մեր գիւղը հարիւր ձիաւորով. նա առաջին բարկութիւնը թափեց ոչ Բոզոյի և ոչ Մարգարի վրայ, որոնցից երեք հարիւր (300) ոչխար յափշտակելով՝ հեռացաւ աւելի մեծ բարկութեամբ վերադառնալու պայմանաւ...։ Մեր ողորմելի ու պարզամիտ ռէֆները նորից Վան գնացին ու ներկայացան կուսակալութեանը. Բահրին՝ որ մեղսակից էր գործին՝ սիրով ընդունեց ռէֆների բողոքը, և այս անգամ մեր դատին պաշտպան նշանակեց Եուսուֆ օղլի Ահմէտ բէկին։ Եկաւ Ահմէտ բէկը, և օգտագործելու համար մի քանի օր շրջելէ յետոյ ոչինչ չարած յետ վերադարձաւ։

Էմին տեսածներից խրախուսուելով այս անգամ իւր ծառաների հետ համարձակ եկաւ և իշխանեց ոչ Բոզոյի տունը։ Նա կանչեց գիւղի երեւելիներէն՝ Մարգար Բարխոյեանին, Կնեազ Առաքելեանին, Մելիք Աթօ Աւետիսեանին և Դաւիթ Իսպիրեանին և խստիւ պահանջեց սատակած Տօկոյի արիւնքը, մինչ Տօկօն իւր բնական մահուամբ էր վերջացած։ Գիւղի երեւելիները խոնարհած երկրպագութիւն անելէ յետոյ, ասացին թէ՝ «փաշայ, եղածը քուկա է, էլ ինչ կը պահանջես»։ Էմին գիւղը թափեց իւր հարկապահանջ ծառաները և մի քանի ժամուան մէջ՝ ծեծի ու անլուր չարչարանաց մատնելով ողորմելի ու արդէն հարստահարուած խեղճուկ Զիրաքլեցուն, կորզեց նրա վերջին կոպէկը... նա հաւաքեց հարիւր յիսուն լիրա և երկու հարիւր հօթանասուն ոչխար ու հեռացաւ...արդեօ՞ք այլ ևս պիտի վերադառնա՞յ։

Զիրաքլի գիւղացին պարտական է նաև տարին տասն երկու ամիս 500-ի չափ ձրի իրդատ հանել Էմին և Հիւսէյն փաշաների համար։ Ողորմելի իրդատները՝ անվարձ, անօթի, բորիկ, տկլոր, օրերով արիւն քրտինք թափելէ յետոյ՝ երբ տուն կը վերադառնան, ոմանք արդէն կիսամեռ՝ ամիսներով հիւանդ՝ անկողնոյ կը ծառայեն. և Զիրաքլեցի Մամիկը՝ վատատակաբէկ որդու խոնջացած բազուկները, կոտրուած մէջքը ցոյց տալով աշխարհին՝ «մը է դատաստան» կը գոչէ. . .

Անցեալ աշուն մեր գիւղի աշարը վերցրած էր Հիւսէյն փաշան. ըստ օրինի տասանորդը նա ութից մէկը պիտի առնէր, բայց փոխանակ այդպէս անելու՝ հնգից մէկը կառնէր։ Նա մնաց մեր գիւղում ուղիղ երեք ամիս իր տասներկու խոլամներով. նրանց կերածը իւղ էր և հաւ. միս, իսկ ձիերինը՝ միշտ գարի։ Գիւղից երեք մարդ շարունակ կրծառայէին նրանց և միշտ կը թիմարէին նրանց ձիերն ու որսի բարակները։ Բարակների կերակուրը միշտ փիլաւ պէտք է լինէր, որոնց հետ շատ անգամ ծառայող հայերին բռնութեամբ սեղան կը նստացնէին ...Հիւսէյն փաշան իւր ամբողջ տասանորդները կրկնապատիկ առնելէ զատ 40 քիլա (16 կոտ) ևս բռնութեամբ ցորեն հաւաքեց. խոտի ուրը լիրա տասանորդի փոխարէն՝ նա յիսուն և հինգ լիրա առաւ։

1895 թ. մարտի 27-ին, Հիւսէյն փաշայի խոլամ Բասէնը բռնութեամբ հաւաքեց մեր գիւղից 80 չափ ցորեն (չափը 4 կոտ), 45 չափ նրա եղբայր Մուսէն։ Նոյն թուականի ապրիլ ամսոյն՝ Համզօ օղլի Թամօն՝ տարաւ մեր գիւղից 63 չափ ցորեն և 27 շիշակ (այծ)։ 28 շիշակ և 5 օսմ. լիրա՝ Դաւիթէն առաւ Օմար օղլի Սրէին, նրա կնոջ ևս լաւ մը ծեծելէ յետոյ։ 23 քիլա ցորեն ուէս Բոզոյից առաւ Մահմուտ աղայի որդի Մուհամմատ. Սրէկի և Սաֆարի սրները քանգիլով՝ 27 գերան տարաւ Հիւսէյն փաշայի խոլամ Բասէն։ Սօրանցի Ալին 5 լիրայի մի գոմէշ ծախեց մեր գիւղացի Մարգար Բարխոյեանին և գինը կանխիկ ստացաւ. յաջորդ օր իւր եղբայր Մուսան ղրկեց և գոմէշն էլ յետ առաւ։ Խոջէի Մահմուտ, ցորեկ ատեն Կնեազի տունը մտնելով՝ իրեն հարկաւոր եղածները՝ 4 հատ կապերտ, 3 հատ շղթայ, 7 թեռ, 5 քիլա ցորեն, հագուստներ հայն եղների վրայ բարձելով՝ առաւ ու հեռացաւ։

Հիւսէյն փաշայի խոլամները ընդ որս և Բասէն, մայիսի 28-ին փախցրին Մելոյի կին Զատորաթը։ 53 հատ շիշակ Բասուլ հաւաքեց մեր գիւղից։ 20 հատ արծաթ մէճիթ և 20 կոտ ալիւր Համզոյի եղբայր Մըհէն։ Միրիպա Տօնօն տաս ոչխարի համար քսան ոչխարի դամշուր (տուլք) առաւ. հայն հայն։

Հարստահարութեանց և պատահած դէպքերին նայելով գրածներս գրեթէ ոչինչ են։ Մեր գիւղացիք արգէն վերին աստիճանի յուսահատ և անելանելի վիճակի մը ենթարկուած են. և եթէ այսպէս շարունակուի՝ անիուսափելի է մեր կորուստը...դժբաղդ Զիրաքլեցին մոխրի վրայ նստած՝ անիծում է իւր սև օրը. գոմը տաւարից թափուրացած, հացի ամբարը դատարկ, թոնիրը սառած... մանկիկը վժում է օրօրոցի մէջ, մօրը ստինքներում կաթն է ցամաքել...

Յարութիւն գիւղ, Քաջբերունեաց գաւառի Ականց գիւղաքաղաքէն երեք ժամ հեռաւորութեամբ՝ 40 տուն հայ բնակչօք մի գիւղ է, որ այս վերջին տարիների մէջ՝ Հայաբանցի, Ատամցի և Բաքրանցի աշիրաթների հարստահարիչ ձեռքին մէջ բոլորովին աւեր ու ամայի դարձաւ։

Ցիշեալ գիւղը անցեալ աշնանէ մինչև այժմ տուած է քրդաց հետեւեալ փոդերն ու ապրանքները։

Զահրազ աղան՝ 200 ղրուշ. 80 չափ ցորեն, 1 ձի, 30 ոչխար և 400 փայտ։ Արսէն Աղայեան՝ 500 ղրշ. 120 չափ ցորեն, 2 ձի, 15 ոչխար և 300 փայտ։ Ցէր Ստեփան քահանան՝ 200 ղրշ. 140 չափ ցորեն, 6 եզ, 5 ձի, 60 ոչխար։ Մինասեան՝ 20 ղրշ. 4 եզ, 5 ձի, 10 ոչխար և 300 փայտ։ Սարգսեան՝ 180 ղրշ. 8 ոչխար և 25 փայտ։ Գասպարեան՝ 170 ղրշ. 90 չափ ցորեն, 4 եզ, 15 ոչխար և 347 փայտ։ Խաչոյեան՝ 900 ղրշ, 2 եզ, 7 ոչխար և 93 փայտ։ Ազիզեան՝ 35 ղրշ. 44 չափ ցորեն՝ 5 ոչխար և 177 փայտ։ Աւետիսեան՝ 400 ղրշ. 65 չափ ցորեն, 2 եզ և 15 ոչխար։ Եղոյեան՝ 40 չափ ցորեն, 4 եզ և 20 փայտ։ Աբրոյեան՝ 300 ղրշ. 50 չափ ցորեն, 2 ձի, 10 ոչխար և 50 փայտ։ Ղանտոյեան՝ 8 չափ ցորեն, 3 եզ, 3 ոչխար և 70 փայտ։ Մուրատեան՝ 80 ղրշ. 35 չափ ցորեն և 3 ձի։ Սողո Խնջոյեան՝ 52 ղրշ. 60 չափ ցորեն, 2 ձի և 4 ոչխար։ Գովէյեան՝ 46 ղրշ. 30 չափ ցորեն, 2 ձի, 2 ոչխար և 43 փայտ։ Գէորգեան՝ 37 ղրշ. 47 չափ ցորեն, և 65 փայտ։ Հայրոյեան՝ 25 չափ ցորեն, 3 ոչխար և 37 փայտ։ Պօղոսեան՝ 38 ղրշ. 54 չափ ցորեն և 9 ոչխար։ Էրոյեան՝ 50 ղրշ. 5 ոչխար և 25 փայտ։ Գօնէյեան՝ 80 ղրշ. 74 չափ ցորեն և 2 ձի։

Գիւղէս կէս ժամ հեռաւորութեամբ Զիարէթ ըսուած գիւղը բնակուող համիդիէ հեծելազունտէն Մահմէտ օղլի Ալի բէկ այս գարնան Ցէր Ստեփան քահանայի սեպհական արտին մէջ սպանեց նրա որդի երիտասարդ Մելիքին, և յափշտակեց նրանց գոմէշը։

Այս երկու տարուան ընթացքին մէջ յիշեալ Ալի բէկը՝ Յարութիւն գիւղից ձրիաբար աշխատացրեր է՝ 900 իրդատ, 100 չիթիթ ու գուլեան և բռնութեամբ հաւաքեր է 250 օխա ձէթ։

Քողեր գիւղ.—Էմին փաշայի հարբուտահարութեանց կեդրոնն է դա։ Քողերի խեղճ գիւղացիք պարտական են ամեն տարի իրենց աշխատութեամբ, առանց վարձի և առանց հաց ու ջրի՝ 400 բարձ խոտ քաղել և իրենց սեպհական սայլերով կրել Էմին փաշայի դուռը։ Նոքա տարեկան 300 սայլ ցորեն ևս կը քաղեն ու կը ծեծեն նրա համար. տասանորդը խեղճ գիւղացիք պէտք է վճարեն. նոյնպէս տարեկան երեսուն հատ թարդիք կը լմեն և կը պատրաստեն Էմին փաշայի համար։ Զմեռը ֆարունպէա՝ Էմին փաշայի վառելիքը յիշեալ գիւղացիքը պէտք է տան։ Բացի վառելիքէն ձմռան երկար ամիսներին Էմին փաշան ամեն տարի՝ եօթը հատ ձի, 30 հատ եզ ու կով և 300 ոչխար իրենց հովիւներով ու շներով գիւղի հաշուով կը պահէ մինչև գարուն։ Նա երկու քիւրդ ընտանիք ևս այս տարի բնակեցրեց այդտեղ, որպէս զի գիւղացոց ծախքովը սպրեն։

Քողեր գիւղը շրջապատուած է չորս քիւրդ գիւղերով։ այդ գիւղերի բնակիչները առաւօտ կանուխ արեգակը դեռ չծագած՝ կը մտնեն Քողեր գիւղը և իւրաքանչիւրը իւր վիտցածի համեմատ ցորեն, գարի, ոչխար, կով, հաւ, իւղ, պանիր, ձէթ հայն, հաւաքելով՝ կը հեռանայ։

Կրագոմ.—Քողեր գիւղին խիստ մօտիկ՝ երեսուն տնուոր հայաբնակ մի գիւղ էր. քանի տարի առաջ այս գիւղը խիստ նախանձելի դրութիւն մը ունէր. սակայն երբ անցեալ տարի Էմին փաշայի ձիաւորները Հիւսէյն փաշայի մի մարդուն սպանեցին, այն ժամանակ Հիւսէյն փաշան չկրնալով Էմին փաշային վնասել, իւր զայրոյթը թափեց յիշեալ խեղճ գիւղացոց վրայ, որովհետև այդ գիւղը կը գտնուէր Էմին փաշայի սահմանին մէջ և նրա իրաւասութեան ներքև։ Գիւղացիք այլ ևս չկարողանալով տակալ՝ բոլորովին գաղթեցին։ Այժմ այդ գիւղը քրդերը կը բնակին։

Խաչերով գիւղ.—Հասս-օղլի Թամօն բանի յափշտակեց 8 չափ ցորեն, 2 ոչխար, 120 ղրշ.։ Համզոյի եղբայր Մէհէն՝ 16 չափ ցորեն և 135 ղրշ.։ Մատս օղլու Ռամօ, 14 հատ երկու տարեկան արջառ։ Էլազասի Հասան աղայի լամուկ Աւսին՝ 18 մաքի։ Զիարաթ գիւղացի Բաստլի եղբայր Ունը՝ Մեծոփայ Վանուց ուէմը մաքին և 4 հատ եզ։ Թամը փաշայի խոլամ Իսքէնտէր՝ 17 քիլա ցորեն։ Սայիդ Բասուլ՝ վեց հատ կով, 12 օխա բուրդ. 1 պղինձ և 10 զոյգ գուլպայ։ Սլէման՝ 15 չափ ցորեն, 20 օխա սապոն, 16 օխա իւղ, 18 օխա բուրդ, 6 կոտ ալիւր և մէկ հատ թեռ, և այլն, և այլն։

1895 թ. յունիսի 5-ին, Գրիգորի տունը կողոպտելով, տարին 8 կոտ գարի, 1 հատ կամ՝ սայ, 8 օխա բուրդ, 21 օխա

իւղ, 5 հատ ոչխար և հարսի անտուկը, ուր կային մէկ թօփ զուլֆի, 1 ֆիսման, 2 խաս էնթարի, մէկ զոյգ ապարանջան և հինգ մէճիթի փող։

Այս հարստահարութեանց պարագլուխներն են՝ մեզ գրացի Համիդիէ աստիճանաւորները—Կասկանցի Ալի և Դաւվիշ աղաները։ Դոքա իրենց մարդկանց ձեռքով այլ ևս նմանը չտեսնուած չարիքները կը գործեն և կը մնան անպատիժ։ Խաչերով գիւղից այս երկու տարուայ ընթացքին մէջ՝ հազար և հինգ հարիւր փայտ են տարած, դեռ անցեալները յիշեալ գիւղից 100 հատ իրդատ տարին և ձրիաբար բանեցրին։ Խաչերով գիւղը միւս գիւղերի նման պարտական է ամեն ձմեռ Ալի և Դաւվրէշ աղաների համար՝ պահել իր գարմանով ու խոտով 200 հատ ոչխար, 25 տաւար, 14 ձի և չորս էլ քրդի տուն, մինչև գարուն կերակրելու համար։

Հասան աղան մարդ ղրկեց Խաչերով գիւղը և մի եզ գողացաւ. վերջը 4 քիլա ցորեն և մի դանդ չաքար առնելով յետ դարձրեց։

Ալի բէկի մարդիկը անցեալ ամսոյ մէջ երեք հատ գոմէշ գողացան. Ալի-բէկ մարդ ղրկեց գիւղ և չորս ոսկի պահանջեց, որպէս զի գոմէշները յետ տայ. սակայն թէ չորս ոսկին կերաւ և թէ գոմէշները։ Նա այս գարնան տասներկու քիւրդ բնակեցնելով Մանուկի այգու մէջ, այգին բոլորովին փճացաւ ու աւերեցաւ. որովհետև ամբողջ ծառերը կարել էին։

Զուրպան բայրամին որ նուիրական օր մ'է ամբողջ Մահմեդականաց համար, Դաւվրիշ աղան Խաչերով գիւղը իջաւ իւր ձիաւորներով և 30 չափ գառներ հաւաքելով՝ մորթեց նրանց ներկայութեանը. «Տեսէք, Հայեր», ասաց նա.. «մի օր էլ այս գառների նման ձեզ պիտի զոհենք մեր Ս. Զուրանի ու փաղիշայի հրամանաւ...». մորթուած գառները գիւղի սայլերով նա կրեց իւր տուն։

Գարնանէ ի վեր մի նոր աւազակ երևան եկած է. Թամօ-օղլի Համզօ անուամբ. «քիչ կար գինաց, մէկ էլ պատաւ յէրթնոց», կըսէ ժողովրդական առածը։ Հարստահարիչների ստուար բազմութեան վրայ Համզօ մ'էլ ունեցանք. փաղաք Մուհամմէտին։ Այս Համզօն գիւղից գիւղ շրջելով՝ թուրք հարկապահանջների նման փող է հաւաքում. հայ գիւղացիք երկիւղից լուռ ու մունջ փողը հաւաքելով՝ ճանապարհ են ձգում այդ անկոչ հիւրին։ Համզօն հաւաքած է՝ 15 մէճիթի Խոռանս գիւղից, 24 մ. Ղազէլ, 16 մ. Վիճակցվուկ, 14 մ. Հաանջկուս և 13 մ. Բարկաթ գիւղերից։ Իսկ նրա եղբայր Մըհէն՝ 19 մէճիթի Գարա-քէշիշ, 8 մ. Վիճակցվուկ, 9 մ. Խոռանց և 9 մ. Ղազէլ գիւղերից։

1894 թ. Մայիս ամսոյ 14-ին, Հաճի Թամըը փաշայի լամուկ Ղասօն, Սիմեան հայարնակ գիւղը կուգայ և երկու մարդ «օլամէջի» հանելով գրասի նման կը բարձէ։ Բեռան ծանրութեան չդիմանալով, ճանապարհին երկուքն էլ ուշաթափ վար կընկնին. քիւրտը նրանց ճանապարհի վրայ ձգելով կանցնի, կերթայ։ Յաջորդ օրը ճանապարհորդներ հանդիպելով՝ լուր կուտան գիւղը, որ անմիջապէս բերել կուտան օլամէջիներին, յորոց մինը կը մեռնի, իսկ միւսը մի ամիս չարաչար հիւանդութենէ յետոյ կը կնքէ իւր մահկանացուն։

Միևնոյն ամսոյ մէջ Հիւսէյն փաշայի եղբօր որդի Ռասէն՝ իւր աւազակ խմբով Ծայծակ գիւղը իջաւ, ուր սկսաւ իւր գազանական բռնութիւններով չարաչար ծեծել խեղճ գիւղացոց և բռնի ցորեն պահանջել։ Ողորմելի գիւղացիք ստիպուած՝ գազանի իրենց գիւղից երկու հոգի Միքայէլ Յարութիւնեան և Սերովբ Թովմասեան կառավարութեան ղրկեցին, իմաց տալու եղելութիւնը։ Քրդեր այս բանը իմանալով՝ լրատուների եռևից կընկնին և կը բանեն նրանց Սրնքաբ ըսուած անձուկ վայրին մէջ, ուր այլ ևս անխնայ հասա գաւազաններով և հրացանների կոթերով կսկսեն ծեծել ողորմելիներին՝ մինչև մեռելութեան աստիճանի. գիւղացիք եղելութիւնը իմանալով՝ կերթան և կը բերեն նրանց. ապա հազար և մէկ աղաչանքով հինգ քիլա ցորեն տալով Ռասէն ազատին, կազատեն։ Միքայէլ և Սերովբ տակաւին հիւանդ են։

Ինչ որ կանեն Համիդիականները, նրանցից հազարապատիկ աւելի են անում թուրք հարկապահանջները։ Հայ մի հայ գիւղ, ուր լեցուած չլինին այդ կատաղի գազաններից, որոնք օրն ի բուն ծեծ, թուք, հայհոյանք, նախատինք թափելէ յետոյ՝ կուտեն հաւու մսերը և հանգիստ կերկարին...։

Չերքէզ Մուհամիր Հաուշը գայմագամ Խան բէկի հրամանաւ աւերեց ամբողջ հայարնակ գիւղերը։ Այդ պատիժ-պատուհաս անձնաւորութիւնը՝ ինչ գիւղ որտը կոխէ, կայրէ ու կը խանձէ. նրա համար մեռած է խղճի ձայնն ու արդարութիւնը, նա մենակ կը ճանաչէ իւր գաւազանը և դաժան Խան բէկի անգութ հրամանները. քանի՞ քանի՞ հայի գլուխ, քանի՞ քանի՞ հայի դէմք ջախջախուած է մինչ օրս. «աղլամագ խոթէմիմ, փարա՞, փարա՞» կը գոչէ նա. ով կարող է առանց դրամի ներկայանալ նրան, նա անմիջապէս կը կատաղի և գիւղը տակն ու վրայ կ'անէ։ Թշուառ հայ գիւղացի, ոնրտեղից պիտի ճարես դու դրամը. եթէ դրամ ունենայիր՝ բրդում մը հաց կ'առնէիր զաւակներդ լացը կարելու. բայց ի՞նչ, անգութ օսմանլուն չի խնայում քեզ, քո տկլոր ճժերի սրտաճմլիկ կանչները նրան դաշնակի ձայն են թըւում... մոլեր ուրեմն տանդ, շուռ տուր քունջ ու պուճախը, պարտիր կնոջդ սընդուկը, տես ինչ թողած է քեզ օսմանլին. մի շաբաթը, վեր առ կնոջդ կիսամաշ անթարին և այն կապերտի կտորները, որով գիշերները ցրտից կը պաշտպանուիք դու և քո մատղաշ զաւկները, տար ուրեմն, ծախիր և տուր Մուհամիր շաուշին, որ հոգիդ ազատես...

Մուհամիր շաուշը հարկերը ժողովելուց զատ՝ իրեն համար ևս կաշառք կը պահանջէ։ Նա Բարկաթ գիւղից կաշառք առաւ մէկ լիրա, Դիլօն գիւղից 130 ղրշ., Գանձակ գիւղից 7 մէճիթ, և այլն։

Իզէթ և Զաքիր զօրքերը Դիլան գիւղը եկան հարկեր ժողովելու. զրանք ուխտը օր գիւղը մնացին և ձիերուն այնչափ գարի վերցրին, որ տասներկու կոտ էլ աւելացաւ. այդ աւելացած տասներկու կոտ գարին նոքա ծախեցին 5 մէճիթի Ալի անունով քրդի մը։ Իզէթ՝ հաճոյքի համար երեք ամբողջ ժամ գըլխի վայր կախեց Սրկէեան Աստուրին. ապա չարաչար ծեծից յետոյ հարկերն հաւաքելով հեռացաւ։ Ճանապարհին գժբախտաբար նրա ձին կը սատկի, ի հարկէ գարի շատ ուտելէն, նա անմիջապէս Ականց կը գնայ և կը զանգատի Խան բէկին Դիլանցի հայերի վրայ, իբրև թէ նրանք իր ձին անօթի ձգելով՝ քաղցածութիւնից սատկած է։ Խան բէկը կը կանչէ Դիլանցի հայերին, և նրանց մի ամիս բանտարկելէ յետոյ, կառնու իբրև ձիի գին 15 ոսկի և բաց կը թողու։

Վալի օնպաշին և իւր Հէֆէր էմին, Միանձուկ գիւղը գալով, հինգ օր մընացին հոն, այդ հինգ օրուան մէջ նոքա կերան 17 հաւ, երկու գառ, և ինը կոտ գարի ալ ձիերուն իբրև թէ կերցնելով՝ աւելացած չորս կոտը Ականց տարին՝ ըէյս էֆէնտիին (դատախազ)։

Համիդիաների և թրքաց կանոնաւոր զօրքերի արածներն այլ ևս անտանելի դառան։ Մեզ կը մնայ ուրեմն ջուրն ընկնել, եթէ ամենարարի Աստուածը չծագէ մեզ մի նոր առաւօտ։

Ըզէթ։

1895 թ., յուլիսի 20։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈԼՂԱՐԻԱ.—«Standard» լրագիրը հրատարակել է Սամբուլովի մի նամակը, որ հանկուցեալը իւր սպանութիւնից մի քիչ առաջ ուղարկած է եղել Լօնդօնի լրագրի Կ. Պօլսի թղթակցին։ Նամակի մէջ 'ի միջի այլոց ասուած է. «Ստոյիլովը հրաժարուեց ինձ անցագիր տալ, ուստի ստիպուած եմ այստեղ մնալ, ուր հնարաւորութիւն չկայ իմ հիւանդութիւնը բուժելու, որ սկսած այն օրից, երբ մակեդոնացի աւազակներին հրամայուած է ինձ սպանել, հնարաւոր չէ փողոց անդամ դուրս գալ։ Անցեալ շաբաթ օրը Պետկովի հետ կլուբ գնացի։ Մեր ոստիկանութիւնն իսկոյն յայտնեց մակեդոնացիներին, որ ես այնտեղ եմ։ Նրանք դուրս եկան և կլուբը շրջապատեցին։ Տեսնելով նրանց՝ ես հաւաքեցի իմ բարեկամներին և տուն վերադարձայ։ Մարդասպանները հետևում էին ինձ։ Նրանք չհամարձակուեցան մեզ վրայ յարձակուել, որովհետև մենք խումբ շատ էինք նրանցից և՝ բացի այդ՝ զինուած էինք։ Նրանց մէջ ես նկատեցի Վուլկովիչին սպանող Տիւֆեկչիևին և Ռեսնացի Միքայէլին, որ ձեռքը վիրաւորել էին, երբ նա ինքնասպանում էր։ Այսպիսով միակ տեղը, ուր ես կարող էի իմ բարեկամներին տեսնել՝ ինձ համար փակ է։ Եւ ես՝ եթէ չեմ ցանկանում սպանուել, պէտք է տանը նստեմ։ Եթէ նրանք յաջողութիւն կունենան, ուր կը հասկանաք բանի էութիւնը դո

և կը հրատարակէք, թէ ով է շարագործութիւնը կատարել»։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

Յուլիսի 21-ից.

ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳ.—Ալէքսանդրիա ամրանոցի եկեղեցում Նոցին Մեծութիւնների ներկայութեամբ հոգեհանգիստ կատարուեց։ Ալէքսանդր III կայսեր համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Թեհրանի առաքելութեան քարտուղար Զալէյէրը հաւատարմատար է նշանակուած Կօրէյայի գործերի վերաբերմամբ, փոխարէն Վերէրի, որ դեսպան է նշանակուած Մեկսիկայում։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ, 20 յուլ. (1 օգ.).—Յերէկուայ ժամը մէկին Դրապէրի մօտ երևաց «Գօլեարնայա զվեզդա» Կայսերական նաւը։ Թագաւորը, Թագուհին և թագաւորական տան միւս անդամները «Դանէբրօգ» նաւով ընդառաջեցին։ Թագաւորը բարձրացաւ «Գօլեարնայա զվեզդա» նաւը, որտեղ և շնորհաւորեց Օգոստափառ Հիւրերի գալուստը և նրանց հետ միասին վերադարձաւ «Դանէբրօգ» նաւը, որ յետոյ գնաց Բէլվիւ. այդտեղ նաւահանգստում Բարձրագոյն Անձինք ռուսական դեսպանութեան և ուրիշ բազմաթիւ պաշտօնական անձանց, և բարեհաճեցին գնալ Բիրնդգօֆի ամրոցը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Յուլիսի 18-ից.

Վերջէլի կուրս 3 ամսով։

Լօնդոնի վրայ 10 ֆ. ստ. . .	23,00
Բերլինի վրայ 100 մարկ . . .	45,42⅝
Փարիզի վրայ 100 ֆր.	36,80
Նոր կարած պլուտմպուքիանոց	7,40 գն. 7.40 վաճ.
Բօրսայի զեղջը	5-ից 7%
4% Պետական արժեթղթ.	99¾
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	163
5% Առաջին ներքին փոխ. խաղատոմս 1864 թ. . .	252½
5% երկր. ներքին փոխառ. խաղատոմս 1866 թ . .	233½
5% Ազնուական հող. բանկի գրաւական. խաղատոմս.	210
5% Պետական երկաթուղու արժեթուղթ	101½
4% Ներքին փոխ. I սեր.	98⅞
„ „ „ II „	98⅞
„ „ „ III „	98⅞
„ „ „ IV „	98⅞
4½% փոխ. 1893 թուի.	101
» փոխ. 1 հրատարակ.	100⅝
» փոխ. 2 հրատարակ.	100⅝
4½% Դրաւակ. արժեթղթ. ազն. հողային բանկի.	100⅝
4½% Գիւղական հողային բանկի վկայագրեր. .	150
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	101¼
„ Մոսկուայի	101
5½% Օդեսայի	100¼
5% Թիֆլիզի	99⅝
5% Դրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի . .	100¼
„ Պոլտաւայի	100¼
„ Տուլայի	100¼
„ Կիևի	101¼
„ Մոսկուայի	101
„ Բեսարաբիայի	100
„ Ներքին Սամարայի . .	100¼
„ Դոնսկոյ	100
„ Վելինսկի	100¼
6% և 5% Թիֆլիզի . . .	102½ և 99½ գն.
„ Քուտայիսի. .	101½ և 99½ գն.

ԶԱՆԱԶԱՆ

Ժամանակակից Սողոմոն։ Հիւսիսային Ամերիկայի Ջօրջինա նահանգի դատարանին ներկայանում են երկու կին և յայտնելով իրենց մայրական իրաւունքները խնդրում են նորանից որոշել, թէ ո՞վ պէտք է համարուի տան օտարական երեխայի մայրը. դատաւորը իրեն դժուար գրութեան մէջ զգալով յիշում է Սողոմոն իմաստուն թագաւորի վճիռը և կամենում է նորան հետևել, զրպանից հանելով դանակը յայտնում է կանանց, թէ նա ուզի լաւ է դատում սպանել երեխային քան թէ տալ նորան այդ տեսակ վատաբարոյ կանանց. «Պէտք չէ... պէտք չէ... երեխային սպանել» միաձայն գոչեցին կանայք. «պահեցէք երեխային ձեզ մօտ»։ Այս ասելով նոքա փախան դատարանից, թողնելով երեխային դատարանում իբրև մի անրսպասելի պարգև դատաւորին։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՁՇԵՐԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ, ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մորթի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազոտութիւն է անում մէզի, խեղ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերահսկուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.
ԱՒԵՏԻՔ ԲԱԼԲԱՅԵԱՆԻ
Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Իւր բացակայութեան պատճառով ամառս Հիւանդերին կ'ընդունէ դոկտոր Սամուէլ Շահ-Պարոնեանցը նշանակեալ ժամերին։

Բացի դեղերից գործածւում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կինարմատներ և երեխաներ

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկարարձ-մասնաժ անող կին և մասնաժիտ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում վիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ա. Ի. ՇԱՀԵՐԲԻՆԻՆԱ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 9—11 ժ. և երեկոյեան 5—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ, տուն Ալիլովի։

Դր. Փարսադանեանցի հրատարակութեամբ
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՄԻ ՏՕՆ ՕՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ
Թարգմ. Ց. Լալայեանի։
Վաճառվում է Կենդրոնական գրավաճառանոցում։
ԳԻՆՆ Է 5 ԿՈՊԷԿ

ՕԹԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՂԱՔԱՊԵՏԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ Է 23.000,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Ծնողներին, խնամատարներին և առ հասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «ՐՕՍՍԻԱ» ընկերութիւնը առաջարկում է *օժիտի* (բաժին) *ապահովագրութիւնը*։

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ռուբլի *օժիտ*, այնպէս որ, 18 *տարեկան ժամանակին* ստանան այդ գումարը (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «ՐՕՍՍԻԱ» ընկերութիւնը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 ռուբլի։

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձնուին բոլոր իր վճարած տուրքերը (պրեմիաները), եթէ միայն ապահովագրուած երեխան վախճանուի պայմանաւորեալ ժամանակից առաջ։

1895 թուի յունվարի 1-ին «ՐՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 31,701 անձինք 83,708,760 ռուբլի գրամագլխով։

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել գրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ գրամագլուխը կը ստացուի իբրև թոշակ (պենսիա) կրթութիւնը շարունակելու համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնուում է՝

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

52—21

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԱՊՐԻԼԻ 15-ԻՑ ԲԱՑՈՒԱԾ Է

ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԵՒ ԸՆՏԻՐ ՀԻՒՐԱՆՈՑ

ՕՐԻԱՆՏ

(Hôtel d'Orient)

Հիւրանոցը գտնվում է քաղաքի կենդրոնում, Գօլովինսկի պրոսպեկտի վրայ, պալատի հանդէպ, տուն Ն. Միրիմանեանի, որ առաջ տեղաւորուած էին դատաստանական ատեանները։ Դեղեցիկ, բոլորովին նոր ՆՕՄԷՐՆԵՐ մէկ ռուբլուց մինչև տասնեւհինգ ռուբլի օրական. ամսով ըստ համաձայնութեան։

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՔԵՍՏՍՊՔԱՆ

Դատելի հասարակական հացկերոյթի համար։ Առանձին կաբինէտներ։ Ֆրանսիական, ռուսական և տեղական խոհանոց։

ՃԱՇԵՐ, ԸՆԹՐԻՔՆԵՐ և ՆԱԽԱՃԱՇԻԿՆԵՐ և յատուկ պատուէրով։

Տեղական, արտասահմանի եւ ռուսաց գինիներ։

(30—18) Հիւրանոցի տէր՝ Ա. ՖՐԱՆՍԻՒՐՕ։

ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱՐ

	Ռ.	Կ.
1) Ուղեցոյց հայ կրօնաւորացուների համար (հին ուխտի) . . .	1	75
2) Ուղեցոյց հայ կրօնաւորացուների համար (նոր ուխտի) . . .	2	5
3) Մի քանի խօսք հայ կրօնաւորացուներին	—	10

ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ

4) Դասատեսակ կրօնի Ա. տարի գ. տիպ.	—	15
5) » » Բ. » Ե. «	—	20
6) » » Գ. » Զ. «	—	30
7) Սրբազան պատմութիւն հին ուխտի գ. տիպ.	—	40
8) » » նոր ուխտի բ. «	—	40

Վերոյիշեալ գրքեր ցանկացողները կարող են դիմել՝ կամ ուղղակի ինձ (Тифлисъ: Священнику Сааку Саакянцу) կամ «Կենդրոնական գրավաճառանոց»։

Ինձ դիմողներն ստանում են 20% զեղչ (ճանապարհածախսն իրանց վրայ է)։ Սահակ քահ. Սահակեանց։

(10—6)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ

„ԹԱՏՐՈՆ"

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԳԷՍՏ

1895 թուակ. ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

(№ 3)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) «Ակամայ բժիշկ», կօմ. 3 գործ., 2) «Մեռէա», դր. 4 գ., 3) «Մ. Ամբիկեանց», 4) «Գիւղական սոպրետութիւն», 5) «Ա. Ս. Գրիբոյեդով», 6) «Գր. Արբահամեան», 7) «Թատրոնի լուսատու աստղերը», 8) «Բանաստեղծութիւններ», 9) «Լ. Բեթհովէն», 10) «Թատրոնական քրոնիկոն», 11) «Գրականութիւն», 12) «Կրիտիքական փորձեր», 13) «Ապահարգան», ողբ. 1 գործ., 14) «Սպասում ենք հիւրերին», կօմ. 1 գործողութեամբ։

«ԹԱՏՐՈՆԻ» երկրորդ գիրքը (№ 4-րդ) լոյս կըտեսնէ առաջիկայ նոյեմբերին։

Հրատարակիչ՝ ԱՂ. ԹԱՐԽԱՆԵԱՆ։

Շարունակում է ներկայ 1895 թ. բաժանորդագրութիւնը։ Տարեկան բաժանորդագինն է 3 ռ. օտարաքաղաքացիների համար 3 ռ. 30 կ., արտասահման 10 ֆրանկ։

Դիմել հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Александру Тарханьянъ, կամ՝ Tiflis, Alexandre Tarkhanian. (3—2)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԻՎԱՆ ՏՈՒՐԳԵՆԵՎԻ
„ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ"
(Стихотворенія въ прозѣ)
Թարգմանեց ԱՂԼԱՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ
Գինն է 50 կ., ճանապարհածախսով 60 կ.։

Ցանկացողները դիմում են Թիֆլիզ «Կենդրոնական գրավաճառանոցին» կամ թարգմանչին՝ Москва, Новая Басманная, домъ Шибаевой контора М. Л. Шорторова, *Александру Цатурянъ.* (5—5)

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
„ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ"
(Հայկական կրթական բաժնով)
Աշխ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵՄՆՑԻ
Գինն է 1 ռուբլի. գումարով գնողներին վիջաւմն։ (5—5)

Дозволено цензурою, Тифлисъ 22-го Іюля 1895 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.